Կարգապահական գործ թիվ ԿԳ-25060

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԱՇՈՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ և զեկուցող անդամ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

քննության առնելով փաստաբան Տիգրան Սարգսյանի (արտոնագիր՝ թիվ 2004), **(այսուհետև նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)**, կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Քաղաքացի Արտյոմ Մոսեյանը **(այսուհետև նաև՝ Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետև՝ Պալատ),** հայտնել է, որ փաստաբան Տիգրան Սարգսյանն իրեն մատուցել է վճարովի փաստաբանական ծառայություն, առանց դրա վերաբերյալ պայմանագիր կնքելու:

Դիմողը հայտնել է, որ զինվորական ծառայություն ՀՀ-ում չի անցել, գտնվել է ՌԴ-ում և Փաստաբանի հետ պայմանավորվել է նշված խնդրի վերաբերյալ իրեն մատուցել փաստաբանական ծառայություններ:

Փաստաբանը խոստացել է լուծել իր խնդիրը մեկ կամ մեկուկես ամսում, սակայն չի կատարել իր խոստումները, ինչպես նաև չի պատասխանել հեռախոսազանգերին:

Դիմողը ներկայացրել է 09.09.2024 թվականին Փաստաբանին կատարված փոխանցման փաստը հավաստող ապացույց, ինչպես նաև իր ծննդյան վկայականը:

Դիմողը խնդրել է քննարկել Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը Դիմողին առաջարկվել է ներկայացնել կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու համար նշանակություն ունեցող տեղեկություններ, այդ թվում՝ համապատասխան բացատրություն, նյութեր, ապացույցներ (առկայության դեպքում):

Արտյոմ Մոսեյանի կողմից ներկայացվել են թվով չորս ձայնային հաղորդագրություններ.

Թիվ ԿԳ-25060-2-Ա
21.05.2025թ.

ինչպես նաև բացատրություն: Բացատրությամբ Դիմողը հայտնել է, որ Փաստաբանի կողմից զանգերին չպատասխանելու արդյունքում ինքը քննիչի կանչով ներկայանալու համար դիմել է այլ փաստաբանի, ով հրաժարվել է իրեն տրամադրել անվճար իրավաբանական օգնություն:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով 08.04.2025 թվականին Դիմողին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողը որևէ դիրքորոշում կամ ապացույց չի ներկայացրել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Տիգրան Սարգսյանին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետև նաև՝ Օրենք)** 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ներկայացնել բացատրություն Արտյոմ Մոսեյանի դիմումի վերաբերյալ, սակայն Փաստաբանի կողմից բացատրություն չի ներկայացվել:

Փաստաբանը 13.03.2025թ. դիմումով խնդրել է տրամադրել Դիմողի կողմից տրամադրված վճարման փաստը հավաստող փաստաթուղթը:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով 08.04.2025 թվականին Փաստաբանին առաջարկվել է Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Փաստաբանը որևէ դիրքորոշում կամ ապացույց չի ներկայացրել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 28.02.2025թ. թիվ 106-Ա/ԿԳ-25060 որոշմամբ փաստաբան Տիգրան Սարգսյանի նկատմամբ Օրենքի **19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետև նաև՝ Կանոնագիրք) 2.7.2, 3.5.5, 3.6.1 և 3.1.3** ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

05.03.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից Հայկ Ծատուրյանին (**այսուհետև նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 05.05.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 3-րդ կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 05.05.2025թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 21.05.2025թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը պարտադիր զինվորական ծառայության հետ կապված գործով, ինչի կապակցությամբ Փաստաբանին վճարվել է 800.000 ՀՀ դրամ: *Սույն փաստը չի վիճարկվել: Այնուամենայնիվ, նշված փաստը հաստատվում է նաև Դիմողի բացատրություններով, դրանց կից ներկայացված Փաստաբանի ձայնային հաղորդագրությամբ, ինչպես նաև 09.09.2024 թվականի վճարման անդորրագրով:*

2. Փաստաբանը դիմավորել է Դիմողին օդանավակայանում և նրա հետ այցելել է Գյումրու ոստիկանության բաժին: *Սույն փաստը չի վիճարկվել: Այնուամենայնիվ, նշված փաստը հաստատվում է Դիմողի բացատրություններին կից ներկայացված Դիմողի մայրիկի ձայնային հաղորդագրությամբ:*

3. Փաստաբանը կանոնավորապես չի տեղեկացրել Դիմողին հանձնարարության կատարման ընթացքի վերաբերյալ և չի պատասխանել նրա զանգերին: *Սույն փաստը չի վիճարկվել: Այնուամենայնիվ, նշված փաստը հաստատվում է նաև Դիմողի բացատրություններին կից ներկայացված Փաստաբանի և Դիմողի մայրիկի ձայնային հաղորդագրություններով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Տիգրան Սարգսյանը փաստաբան է հանդիսանում 28.11.2015 թվականից, և 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում 2 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, որոնցից 1-ը կարճվել է, իսկ մյուսով ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, որը մարվել է:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Տիգրան Սարգսյանն ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5, 3.6.1 և 3.1.3 ենթակետերի պահանջների խախտման համար:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.3-րդ ենթակետի մասով.

Կանոնագրքի 3.1.3-րդ ենթակետի համաձայն՝ *գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքներ կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:*

Սույն դրույթի նորմատիվ էությունը կայանում է նրանում, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի բարեխիղճ, փոխադարձաբար արդյունավետ և գործարար շրջանառության էթիկայի տեսանկյունից ընդունելի գործելակերպի համար: Միևնույն ժամանակ, փաստաբանի և վստահորդի միջև կնքված գրավոր պայմանագիրը թույլ է տալիս խուսափել տարաձայնություններից կամ դրանց առաջացման դեպքում ծառայում է վեճի լուծման ապացուցողական հիմք:

Ընդ որում, հատուցելի փաստաբանական ծառայությունների համար գրավոր պայմանագրի առկայության պահանջ Կանոնագրքով սահմանելը նշանակում է, որ փաստաբանի և վստահորդի հարաբերություններում գրավոր պայմանագրի առկայությունն ունի ոչ միայն քաղաքացիաիրավական, այլև՝ մասնագիտական-էթիկական նշանակություն, քանի որ գրավոր պայմանագրի առկայությունն է թույլ տալիս *վիճելի դեպքերում պարզել կողմերի փոխադարձ իրավունքների ու պարտականությունների ծավալն ու բովանդակությունը, ըստ այդմ նաև՝ պարզել կոնկրետ իրավիճակում փաստաբանի կողմից վարքագծային-էթիկական պահանջների կատարումը:*

Հանձնաժողովն ընդգծում է, որ Կանոնագրքի 3.1.3 ենթակետով գրավոր պայմանագրի առումով արվում է մեկ բացառություն՝ թույլատրելով փաստաբանին վստահորդի հետ գրավոր պայմանագիր կնքել նրա՝ հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից 2 ամսվա ընթացքում, այն էլ, եթե առկա են գործի որոշ առանձնահատուկ հանգամանքներ, եթե գործի ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:

Ավելին՝ Կանոնագրքով, մեծ կարևորություն տալով փաստաբանի և վստահորդի միջև իրավահարաբերությունների գրավոր ամրագրմանը, ցանկալի է համարվում ընդհուպ անհատույց հիմունքներով իրավաբանական օգնության ցուցաբերումը գրավոր պայմանագրի հիման վրա (3.1.5 ենթակետ): Ընդ որում, Կանոնագրքի 3.1.3 ենթակետի շարադրանքից հետևում է, որ գրավոր պայմանագիր կնքելու պարտականությունը հստակորեն դրվում է փաստաբանի վրա: Այսինքն, եթե պատվիրատուն կամ վստահորդը չեն պնդում գրավոր պայմանագրի կնքումը կամ ցանկանում են փաստաբանի հետ հարաբերվել՝ առանց իրավապայմանագրային հիմքի, ապա փաստաբանը պարտավոր է նրանց իրազեկել, բացատրել դրա անթույլատրելիության վերաբերյալ և հրաժարվել առանց պայմանագրի նրանց իրավաբանական ծառայություններ մատուցելուց: Այլ խոսքով՝ փաստաբան-վստահորդ հարաբերություններում գրավոր պայմանագրի առկայությունը փաստաբանի վարքագծային-էթիկական պարտականությունն է:

Սույն գործով Դիմողը պնդել է, որ փաստաբան Տիգրան Սարգսյանն իրեն մատուցել է վճարովի փաստաբանական ծառայություն, առանց դրա վերաբերյալ պայմանագիր կնքելու:

Կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 08.04.2025 թվականին Փաստաբանին առաջարկվել է ներկայացնել փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած լինելու վերաբերյալ ապացույց:

Փաստաբանը չի ներկայացրել փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած լինելու վերաբերյալ ապացույց: Ավելին, Փաստաբանը նույնիսկ դիրքորոշում չի ներկայացրել՝ ի պատասխան Դիմողի պնդման:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Տիգրան Սարգսյանը խախտել է Կանոնագրքի 3.1.3 ենթակետի պահանջը, քանի որ վերջինս, ունենալով Դիմողի

կամ պատվիրատուի հետ ի սկզբանե կամ առավելագույնը 2 ամսվա ընթացքում փաստաբանական ծառայությունների վճարովի մատուցման գրավոր պայմանագիր կնքելու պարտականություն, խախտել է այդ պարտականությունը, այսինքն՝ գրավոր պայմանագիր չի կնքվել, իսկ փաստաբանական ծառայությունները մատուցվել են առանց գրավոր պայմանագրի:

Այսպիսով, փաստաբան Տիգրան Սարգսյանի վարքագծում Կանոնագրքի 3.1.3 ենթակետի պահանջի խախտումը, ըստ այդմ նաև՝ իրավական ու փաստական միևնույն հիմքերով Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտումը Հանձնաժողովը համարում է հաստատված:

Կանոնագրքի 2.7.2-րդ, 3.5.5-րդ և 3.6.1-րդ ենթակետերի խախտման մասով.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝*

*1) ազնվորեն և **բարեխղճորեն** պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով.*

2) պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին **բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ** իր մասնագիտական կարողությունների սահմաններում, **ինչը ենթադրում է** իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, **հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:***

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, **բարեխղճորեն**, որակավորված, սկզբունքայնորեն և **ժամանակին**, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Կանոնագրքի 3.6.1-ին ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Համադրելով Կանոնագրքի նշված ենթակետերը՝ Հանձնաժողովը գտնում է, որ դրանք համակցությամբ մեկնաբանելիս բացահայտվում է փաստաբանի գործունեության բարեխղճության, և հանձնարարության պատշաճ և լրիվ կատարման իրավական բովանդակությունը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ փաստաբանը պարտավոր է ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը:

Նշվածը ենթադրում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

ՄԱԿ-ի 1990թ. **«Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ»**-ի մասին փաստաթղթի համաձայն, փաստաբանների պարտականությունների մեջ է մտնում, inter alia, **«իրենց վստահորդներին բոլոր պատշաճ միջոցներով օգնելը, և նրանց շահերը պաշտպանելու ուղղությամբ իրավական գործողություններ ձեռնարկելը»** (կետ 13(բ), իսկ իրենց վստահորդների իրավունքները պաշտպանելիս ու արդարադատության իրականացմանը աջակցելիս պարտավոր են պաշտպանել ազգային և միջազգային իրավունքով պաշտպանված մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, և պետք է մշտապես գործեն ազատորեն և ջանասիրաբար՝ օրենքի և իրավաբանի մասնագիտության ճանաչված սկզբունքների և էթիկական նորմերի համաձայն (կետ 14):

Վերը նշված կանոններից բխում է նաև, որ փաստաբանը ոչ միայն կրում է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալու, այլ նաև տրամադրված օգնության կամ գործի ընթացքի մասին վերջիններիս տեղեկացնելու և վստահորդի հետ մշտական կապ պահելու պարտականություն: Վերջապես վստահորդի հարցերին պատասխանելը այն ողջամիտ ակնկալիքն է, որ յուրաքանչյուր վստահորդ ունի իր փաստաբանից:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը՝ զինվորական ծառայության հետ կապված խնդրով:

28.09.2024թ. Դիմողը եկել է Հայաստանի Հանրապետություն, որտեղ Փաստաբանը դիմավորել է Դիմողին օդանավակայանում և նրա հետ այցելել է Գյումրու ոստիկանության բաժին:

09.09.2024 թվականից գումարը Փաստաբանին փոխանցելու օրվանից ընդհուպ մինչև Փաստաբանի ծառայություններից հրաժարվելը ու Պալատ դիմում-հաղորդում ներկայացնելը, գործում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ Փաստաբանը Դիմողի շահերի պաշտպանության ապահովման ուղղությամբ կատարել է որևէ այլ գործողություն, քան նրանք, որոնք նշեցին վերևում:

Դիմողն իր հերթին պնդել է, որ փաստաբանական ծառայություններն իր մեջ ներառում է օդանավակայանից դիմավորել, ՀՀ ոստիկանություն, հիվանդանոց, զինկոմիսարիատ և այլ հաստատություններ այցելել:

Դիմողը նաև հավելել է, որ Փաստաբանը չի պատասխանել իր զանգերին, որի հետևանքով չի ստացել իրավաբանական օգնություն, երբ պետք է ներկայանար նախաքննական մարմին:

Այսպես, գործում առկա չէ ապացույց Դիմողի և Փաստաբանի միջև կնքված պայմանագրի

վերաբերյալ, ինչը հնարավորություն կտար առավել հստակ հատկորոշել հանձնարարության ծավալը, իսկ փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու պարտականությունը, ինչպես վերևում նշեցինք կրում է Փաստաբանը: Այնուամենայնիվ, Փաստաբանը չի ներկայացրել որևէ ապացույց կամ դիրքորոշում Դիմողի կողմից նշված ծառայությունները բարեխղճորեն մատուցված լինելու կամ նման պարտականություն ստանձնած չլինելու կամ որևէ ողջամիտ բացատրություն Դիմողի կողմից նշված պարտականությունները հարգելի պատճառով չկատարելու վերաբերյալ: Բացի այդ, Փաստաբանը կանոնավորապես չի տրամադրել տեղեկություններ գործի ընթացքի մասին, չի պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին, որի հետևանքով Դիմողը հրաժարվել է Փաստաբանի ծառայություններից: Այս ամենը հաստատվում է Դիմողի ներկայացրած ձայնային հաղորդագրություններով, բացի դա՝ Փաստաբանը չի ներկայացրել հակառակի մասին վկայող որևէ ապացույց կամ նույնիսկ դիրքորոշում:

Ամբողջ վերը նշվածը հիմք ընդունելով՝ միանշանակ է, որ Փաստաբանը, ստանձնելով Դիմողի շահերի պաշտպանությունը, խախտել է փաստաբանի համար սահմանված բարեխղճության կանոնը, այն է՝ պատշաճ կարգով ցույց չի տվել իրավաբանական օգնություն, ինչպես նաև չի պատասխանել Դիմողի զանգերին:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ ցանկացած դեպքում հանձնարարության կատարման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը փոխկապակցված է դրանց արդյունավետ՝ այդ թվում ժամանակային առումով գործադրման հետ: Ընդ որում, հաշվի առնելով փաստաբանի իրավապաշտպան առաքելությունը և համապատասխան իրավունքի իրացման համար օրենքով սահմանված ժամկետները՝ Փաստաբանն իր վստահորդին ցուցաբերելով բարեխիղճ իրավաբանական օգնություն, պետք է հետևողական լինի գործի ընթացքին և ողջամիտ ժամկետում, կատարի իր վստահորդի իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ բոլոր գործողությունները:

Ամբողջ վերոգրյալից հետևում է, որ Փաստաբանը չի գործել ջանասիրաբար՝ օրենքի և իրավաբանի մասնագիտության ճանաչված սկզբունքների և էթիկական նորմերի համաձայն:

Կարգապահական տույժի ընտրությունը.

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը:

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) ***լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.***

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական*

հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա փոյժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ փոյժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված փոյժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է, որը դրսևորվում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված կարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթի իրականացման մեջ:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մասնավորապես՝ այն, որ խախտումն իր բնույթով բազմադրվագ է, որոնք լրջորեն վատթարացնում են փաստաբանության հեղինակությունն ու խաթարում են վստահությունը փաստաբանների նկատմամբ: Հանձնաժողովը հաշվի է առնում նաև Փաստաբանի մեղքի աստիճանը, որը մեղմացնող որևէ փաստ կամ ապացույց առկա չէ, ինչպես նաև հաշվի է առնում Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները՝ այդ թվում նաև կարգապահական տույժերի բացակայությունը:

Տվյալ պարագայում Հանձնաժողովը հաշվի է առնում նաև այն փաստը, որ գործի նյութերով հաստատված է համարվում, որ Պատասխանողի կողմից չեն իրականացվել Դիմողի շահերի պատշաճ պաշտպանության ուղղությամբ բավարար գործողություններ:

Փաստաբանը պետք է գիտակցեր, որ իր գործողություններից ու անգործությունից ուղղակիորեն կախված է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանության արդյունավետ ապահովումը, որպիսի պայմաններում էլ պետք է կանխատեսեր իր վարքագծի հնարավոր հետևանքները, առնվազն ձեռնարկելով ողջամիտ ջանքեր Դիմողի շահերը լավագույնս ներկայացնելու համար:

Վերոնշյալի համատեքստում պետք է նաև նշել, որ փաստաբան Տիգրան Մարգսյանը իրեն մեղսագրվող արարքը կատարել է դիտավորությամբ և կատարվածի համար չի զղջացել,

վերջինիս վարքագծի հետևանքով տուժել է փաստաբանական համայնքի և փաստաբանի մասնագիտության հեղինակությունն ու բարի համբավը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ պետք է կիրառել «խիստ նկատողություն» տույժի տեսակը: Միաժամանակ, հետագայում նմանատիպ իրավիճակները կանխարգելելու նպատակով, ինչպես նաև նկատի ունենալով, որ խախտումն իր բնույթով հիմնականում վարքագծային-էթիկական բնույթ ունի՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Փաստաբանի նկատմամբ որպես լրացուցիչ տույժ կիրառել «վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա»» թեմայով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետի, 3-րդ մասի պահանջներով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Տիգրան Աշոտի Սարգսյանի (արտոնագիր՝ թիվ 2004) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2-րդ, 3.5.5-րդ, 3.6.1-րդ և 3.1.3-րդ ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝

Տաթևիկ Շալջյան

Թիվ ԿԳ-25060-2-Ա
21 մայիսի 2025թ.
ք. Երևան